

ՄԻՋՆԱԳԱՐՅԱՆ ՀԱՅ ԲԺՇԿԱՊԵՏՆԵՐԻ ՀԱՅԱՅՔՆԵՐՆ ԱՆԵՐԳԻՆ  
ՀԻՎԱՆԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՆՐԱՆՅ ԲՈՒԺՄԱՆ ՎԵՐԱՐՆԵՑԱԼ

Ալերգիկ հիվանդությունները, որոնք մեծ տարածում ունեն մեր օրերում, հայանի են հղել դեռևս հնում: Հիպոկրատն իր «Ասուլթներում» խոսում է հղնջատենդի, դարնաճային հարբուխի և բրոնխիալ ասթմայի մասին [1, էջ 706—707]: Հետագայում արաբական բժշկության դասականները լուրջ ուշադրություն են դարձրել ալերգիկ հիվանդությունների ախտաբանության և բուժման հարցերին: Իբն Սինան «Կանոնում» անդրադարձել է բրոնխիալ ասթմայի կամ արաբերեն տերմինաբանությամբ «ոտուրու»-ի (վերջինս բնագտնված էր նաև միջնադարյան հայ բժշկության մեջ) ախտաբանությանը, միաժամանակ տալով նրա լիակատար կլինիկական պատկերն ու բուժման դանազան հղանակները [2, էջ 443—451], որոնք մեծ հետաքրքրություն են ներկայացնում արդի ալերգաբանության համար:

Ալերգիկ հիվանդությունները գրավել են նաև միջնադարյան հայ բժշկապետներ Մխիթար Հերացու, Գրիգորիսի ու Ամիրզուլաթ Ամասիացու ուշադրությունը: Այսպես, XII դարի հուլավաժոր բժիշկ Մխիթար Հերացու «Զերմանց մխիթարութիւն» գրքի 3—18-րդ գլուխներում նկարագրված են «միօրեայ» ջերմերը [3, էջ 7—32], որոնց կլինիկական պատկերը շատ մոտ է արդի պատկերացումներով ֆիդիկական, բիմիական, սննդային և ներվային բնույթի որոշ ալերգիաներին:

Հերացին քաջածանոթ է հղել ֆիդիկական ալերգիաների դանազան տեսակներին, այդ թվում ճառագայթային, ջերմային և ցրտային ալերգիաներին: Եվսան միօրեայ ջերմանն, որ պատճառն ի ցրտոյ լինի» գրված նա անդրադառնում է ցրտային ալերգիաների կլինիկական պատկերին. «Եւ իւր նշանն այս է, որ մարմնոյն կաշին խոշոր լինի և տաքութիւն ի մարմնոյն շօշափելիքն պակաս լինի և մաճասին երակն շուտ լինի, և լինի, որ գոյն սպիտակ դալ» [3, էջ 14]:

Ներկայումս լայնորեն տարածված քիմիական ալերգիաները հայտնի են հղել դեռևս միջնադարում, ինչպես վկայում է Մխիթար Հերացու

գործի հետեւյալ հատմածը «Վասն միօրեայ ջերմանն, որ պատճառն ի փոթոթ ջրոյ լուանալոյն լինի» գլխում. «Այս ջերմն լինի, յորժամ մարդն լուանիլ ծծմբի ջրով, և իւր կաշին խիստ շորանայ, աւելի քան դայն, որ պատճառն ի ցրտոյ լինի» [3, էջ 12]: Ժամանակակից արերգարանութեան տվյալներով, ծծումբը հանդես է գալիս ալերգիկ դերում, առաջացնելով կոմպլեքսային անտիգեններ մաշկի սպիտակուցներին հետ [4, էջ 523]:

Նշարդային համակարգի դերլարված միճակը, հոգեկան տրավմաները և ապրումները ըստ Մխիթար Հերացու տեսության, առաջացնում են «միօրեայ» ջերմերի մի յուրօրինակ տեսակ, որի նկարագրությունը համընկնում է արդի գիտությունը հայտնի ներվային ալերգիայի կլինիկական պատկերի հետ: «Վասն միօրեայ ջերմանն, որ պատճառն ի սիրտ հընելոյն լինի» գլխում հեղինակը գրում է. «Եւ իւր նշանն այս է՝ որ աչքն ի յիւր բնական գոյնէն փոխի և ի դուրս բարձրանայ, և երեսացըն գոյնն խիստ կարմրի, և լինի, որ երեսն այտոյց առնու և գոգն կարմիր դառնայ» [3, էջ 16]:

Ըստ Մխիթար Հերացու «միօրեայ» ջերմերի պատճառ կարող են լինել նաև մարմնի ընդհանուր հյուծվածությունը կամ թերսնումը, առաջացած «ի շատ դատելոյն, կամ ի ծանր և դժար բանէ, կամ անօթի կենալոյց»: Նշված գործոններն արդի ալերգաբանության մեջ հայտնի են իբրև ալերգիկներ:

«Միօրեայ» ջերմերի շարքում հատուկ տեղ են զբաղում նաև այնպիսիները, որոնց ժամանակակից բժիշկ-ալերգաբանը կանվաներ սննդային ալերգիաներ: Սրանց ծագումը, ըստ մեր միջնադարյան հեղինակի, պայմանավորված է մի շարք պատճառներով՝ «ի շատ կերակրոյց», «ի թուխմայէ» կամ «ի տաք կերակրոյց»:

Վերջապես, «Վասն միօրեայ ջերմանն, որ պատճառն գուգամ և նուզլայ և հաղ լինի» գլխում հեղինակը կոահել է նաև վերին շնչառական ուղիների ինֆեկցիոն-բորբոքային պրոցեսի կարևոր դերն ալերգիկ հիվանդությունների առաջացման գործում:

Նրա հայացքից չեն վրիպել ալերգիկ հիվանդությունների կլինիկական բնթացքի առանձնահատկությունները, ըստ որում նա հատուկ նշում է «միօրեայ» ջերմերի սուր սկիզբը և թուլցիկ բնույթը, որը սակայն միշտ չէ, որ ավարտվում է մեկ օրում. «Ապա թէ ասէ որ, եթէ յամենայն այս պատճառնիս դորքն և ջերմն ի յար մնայ, դու ընդ էր անուանցիկ դսա միօրեայ ջերմն, տամք պատասխանի և ասեմք այսպես, եթէ յոր օր ընծայի ցան, նոյն ի յօրն այն լինի ջերմն և ի յոր օր ողջանայ ցան, ի նոյն օրն արձակի ջերմն» [3, էջ 23]:

«Միօրեայ» ջերմերի վերաբերյալ Հերացու հայացքները հետա-

գլխում դարգացրել են Հայ բժշկապետներ Գրիգորիսը և Ամիրզովլաթ Ամասիացին նրանց գործերում արտացոլված են նաև ալերգիկ հիվանդությունների առանձին ձևեր, որոնք հայտնի են ժամանակակից բժշկությանը՝ բրոնխիալ ասթման և եղնշատենդր կամ «սուրու»-ն ու «շարա»-ն:

Այսպես, օրինակ, XIII դարի Հայ հեղինակ Գրիգորիսն իր «Քննութիւն բնութեան մարդոյ և նորին ցաւոց» ախտաբանության հարցերին նվիրված երկում հետևյալն է գրում բրոնխիալ ասթմայի մասին. «Եւ այն նեղեր, որ պատահին թորին, որ ասին ուտալու... նայ այն դոր չիշեցար, ի թորն լինի, զի նեղնայ շնչներակնին... եւ իւր նշանն ալն է, որ հաղայ և ընդ հետ հազին կսկիծ լինի ի կուրծքն և ի թորն, և ետայ և խտղատի, զերտ որ բմանց խտղտայն է, որ զփոնրտայն բերէ... Զի այս նեղոյս շնչատեղն նման է ի յայն շունչն, որ ի ծանր աշխատութենէ լինի... նայ որ պատկիրն դմարնայ և չերր նստի և ի յտան ելնէ՝ դուրանայ, և ինքն ի բուն սակաւ լինի» [5, էջ 107]:

XV դարի նշանավոր Հայ բժիշկ Ամիրզովլաթ Ամասիացին իր «Օգոտ բժշկութեան» (1469 թ.) և «Անգլոտաց անպէտ» (1482 թ.) գործերում հատուկ կանդ է առել բրոնխիալ ասթմայի և եղնշատենդր ախտաբանության ու բուժման հարցերի վրա: Ալերգիկ հիվանդությունների ծագումը և ախտածնությունը, նա, ինչպես նախորդ շրջանի հայ և օտարազգի հեղինակները (Իբն Սինան, Գրիգորիսը), բացատրում է սխալաստիկ հումորալ տեսությամբ, սակայն անգրագառնալով կլինիկական պատկերին և բուժման եղանակներին, ելնում է մահճարժույթի և զեղադրաբանության աստղարեղում ունեցած իր սեփական հարուստ փորձից:

Ժամանակակից ալերգաբանության համար առանձնապես մեծ հետաքրքրություն են ներկայացնում Մխիթար Հերացու և Ամիրզովլաթ Ամասիացու բուժական եղանակները և մասնավորապես ալերգիկ հիվանդությունների բուժարժույթները: Այս առումով կարևոր նշանակություն ունեն այն զեղարույսերը, որոնք Մխիթար Հերացին օգտագործել է «միօրեայ» ջերմերի բուժման համար: Նախ և առաջ պետք է նշել, որ «Զերմանց մխիթարութեան» հեղինակը հետևել է էտիոպաթոգենետիկ բուժման ընդհանուր սկզբունքին, պահանջելով հիվանդի համար ստեղծել ֆիզիկական և հոգեկան հանգստի պայմաններ, հեռացնել հարուցիչ գործոնները, զեղային և անդաշին բուժումից բացի ուշադրություն դարձնել ֆիզիկական միջոցառումների վրա (լոգանք, սառը շփումներ, ստամոքսի լվացում, հոգնա, ինհալացիա):

Ալերգիկ հիվանդությունների բուժման կոմպլեքսային համակարգում, որ մշակել են միջնադարյան հայ բժշկապետները, կարևոր տեղ են զբաղում Հայաստանի բնաշխարհի բույսերից պատրաստված զեղերը,

որոնք, ի դեպ, ծառայել են նաև իբրև օժանելիք, հատկապես վարդի-  
երիցուկի, մանուշակի ու նունուֆարի ձեթն ու քաֆուրը: Հերացին, օրի-  
նակ, խորհուրդ էր տալիս հետևյալ ձևով բուժել այն «միօրեայ» ջերմը,  
«որ պատճառն ի տքնութենէ լինի»։ «Առ պապունաճ և մանուշակ, նո-  
նոֆար և խաշխաշ, դայտ ամենս ջրով եփէ աղէկ և զգլուխն այդ  
ջրովդ ի յար ծեփէ, զի օգտակար է և քուն բերէ՝ զջերմն արձակէ: Զձեռն  
և զոտն մանուշակի ձիթով օժանէ մարմնով, և հաւու ձագ և տուռաճի  
(փասիանի) միս ուտէ, և գինի տուր սակաւ-սակաւ» [3, էջ 21]: Հոգե-  
կան ապրումներից առաջացած ալերգիաների դեպքում Հերացին իր  
գրքի «Վասն միօրեայ ջերմանն, որ պատճառն հոգսն և տրտմութիւն  
լինի» գլխում հետևյալ բուժումն է առաջարկում. «Եւ իւր ստածումն այս  
է, որ ընդ խաղ և ընդ կատակ և ընդ ամենայն իրք ուրախութիւն բերէ և  
զըմբաղի, և որչափ կարէ գուսանի և լարի և անուշ եղանակաց ձայն  
լսել... ի բաղանիս կիսատաք ջրով յաւազան մտէ և զմարմինն մանու-  
շակի ձիթով օժանէ և հանապաղ ի հով և ի գինային ծաղկունսն հոտոտայ,  
զերդ մանուշակն և ի նոնոֆարն և այլ զոր ինչ նման են սոցա, և զմու-  
փառեհ մաճուեն, որ է խնդացնող, որ քաֆուրիայ ասեն, յար ի բանի  
պահէ. և հով լուսպնովն զկուրծս օծարէ, զերդ պղրկատունի լուսպն»  
[3, էջ 19]:

Կոմպլեքսային բուժման այս համակարգը հետագայում ավելի խո-  
րացրեց և հարստացրեց XV դարի խոշորագույն հայ բժիշկ Ամիրդով-  
լաթ Ամասիացին: Իր «Օգուտ բժշկութեան» և «Անգիտաց անպէտ» գոր-  
ծերում նա հիշատակում է բազմաթիվ դեղաբույսեր, որոնք օժտված են  
հակաալերգիկ ներգործութեամբ: Մեր նպատակն է եղել ուսումնասիրել  
Մխիթար Հերացու և Ամիրդովլաթ Ամասիացու երկերում հանդիպող հա-  
կաալերգիկ դեղաբույսերը, օգտագործված հատկապես եղնջատենդի և  
բրոնխիալ ասթմայի բուժման նպատակով: Գլխավոր դժվարությունն է-  
րից մեկն այստեղ այն է, որ ձեռագիր բժշկարաններում պահպանված  
դեղաբույսերի միջնադարյան հայերեն, հունարեն, լատիներեն, արաբե-  
րեն և պարսկերեն անունները տրված հայերեն տառադարձությամբ չեն  
համապատասխանում ժամանակակից բուսաբանության մեջ կիրառվող  
լատիներեն տերմիններին: Սրանց վերծանումն ու նույնացումը ըստ  
աշխարհագրական դիրքի դեղաբույսերի արդի անունների հետ կատա-  
րել ենք Ն. Անենկովի [6], Ա. Բեդեյանի [7], Ղ. Ալիշանի [8], Թ. Մա-  
տուրյանի [9], Պ. Ղանդիլյանի [10] բուսաբանական բառարանների,  
ինչպես նաև մի շարք «Ֆլորաների» օգնությամբ [11]: Միջնադարյան հայ  
բժշկապետների նկարագրած փաստերը համեմատել ենք ժամանակակից  
բուսաբանական ձեռնարկներում, ատլասներում [12], հանրագիտարան-  
ներում [13], ինչպես նաև ընթացիկ գրականության մեջ առկա տվյալնե-

րի հետ Այս առումով հույժ օգտակար է եղել Ս. Զոլոտնիցկայայի երկա-  
սիրությունը՝ նվիրված Հայաստանի բնաշխարհի զեղարույսերին [14]։  
Ուսումնասիրությունները պարզեցին, որ Մխիթար Հերացու և Ամիր-  
զովլաթ Ամասիացու գործերում հիշատակվող հակաալերգիկ զեղարույ-  
սերը սերվում են 25 բուսաբանական ընտանիքներից, բոս ժամանա-  
կակից բուսաբանության մեջ ընդունված դասակարգմանը Հաշտովել է  
նաև պարզել, թի որ սեռին են պատկանում մերոհիշյալ զեղարույսերը։  
Մակայն բուսական տեսակների սրտումն ալկիլ բաղդ գործ էր, բանի որ  
միջնադարյան բուսաբանական տերմինաբանության մեջ հաճախ կի-  
րառվել են անտիկ հեղինակներից և մասնավորապես Գիսկոթրիգեսից  
եկող տերմինները, որոնք բնորոշ էին Հունաստանի, Իտալիայի և Լի-  
բուսիան ալլ երկրների ֆլորային, բոս սրում շին նշվել տեղային տե-  
սակների անունները։ Բոլոր նման զեղերերում սեռի անվան կողքին  
փակագծերում արվում են ընդի հայկական տեսակների անունները՝  
օտար ձևերին դուրենթաց։ Ինչպես երևում է № 1 աղյուսակի ալլայնե-  
րից, մերոհիշյալ զեղարույսերը պատկանում են 41 բուսաբանական սե-  
ռի, որոնց զգալի մեծամասնությունը սերվում է 10 ընտանիքներից՝  
Apiaceae, Araceae, Asteraceae, Brassicaceae, Cupressaceae, Faba-  
ceae, Lamiaceae, Liliaceae, Oleaceae, Rosaceae Արդի դիտության  
ալլայնեբով, մերոյիններս հարուստ են ալլալոիդներով, գլյուկոզիդնե-  
րով, էթերային յուղերով, կումարիններով, սապոնիններով և կենսաբա-  
նական ալլ ալկոլով միացություններով։ Նշված զեղարույսերի ալլզեցու-  
թյան մասին ալլիլի խոր պատկերացում կազմելու համար դիմենք հայ  
բժշկապետների երկերում և հատկապես Ամիրզովլաթ Ամասիացու «Ան-  
գիտաց անպէտ» գրքում պահպանված մկալություններին, որանք բազ-  
դատելով ժամանակակից բժշկության ալլայնների հետ։

Այսպես, ձեռագիր բժշկաբաններում իրրե հակաալերգիկ զեղամի-  
ջոց հիշատակվում են Apiaceae ընտանիքից հետեյալ բույսերը՝ 1. դին-  
ձը—*Coriandrum sativum* L. 2. կոծձուր կամ միջնադարյան տերմինա-  
բանությամբ սուղունուլլունը—*Heracleum* (*H. sosnowskyi* Manden,  
*H. sphondylium* L. 3 կապնդեղը (սալսալիոս) —*Seseli* (*S. peuce-  
danoides* (Bieb) Kos—Pol., *S. tortuosum* L.)։ Գինձը լայն կիրառում է  
ունեցել միջնադարյան բժշկության մեջ եղնջատենդի և ալլ մաշկային  
ալլերգիաների բուժման համար։ Ամիրզովլաթ Ամասիացին գրում է.  
«Գինձ, որ է քիշնիճն, որ է բուզպարա... և իր դալարին քամուքնի դեր-  
նին դտաքութիւնն տանի և տաք ուռէցնուն օգտէ և հումբային, և շա-  
րային ալլ օգտէ... Եւ թէ դուրն շաքրով ուտեն՝ օգտէ շաքարին... Եւ  
թէ յամէն օր Ա դրամ (1 դրամ=3,824 գ) տաս Ա դրամ շաքարով, օգ-  
տէ շաքարին» [15, էջ 115]։ Գինձը և հատկապես նրա տերմինները հա-  
224

## Միջնադարյան հայ բժշկության մեջ կիրառվող հակաախեղքիկ դեղաբույսեր

| Բուսաբանական<br>ընտանիք | Բուսաբանական սեռի<br>(տեսակի) ժամանակակից<br>լատիներեն անուն                                                                                            | Բույսի միջնադարյան<br>անուն                          | Բույսի ժամանակակից<br>հայերեն անուն               | Հիվանդություն                                 |
|-------------------------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------------------------------------------------|---------------------------------------------------|-----------------------------------------------|
| 1                       | 2                                                                                                                                                       | 3                                                    | 4                                                 | 5                                             |
| Aplaceae                | 1. Cortlandrum sativum L.<br>2. Heracleum (H. sosnowskyt Manden., H. sphondylium L.)<br>3. Seseli (S. peucedanoides (Sieb) Ros - Pol., S. tortuosum L.) | գինձ, քուղսլարա<br>սուղունտուլիոն<br>սայալիոս        | դինձ<br>կոծծուկ<br>կապնդեղ                        | եղնջատենդ<br>բրոնխիալ ասթմա<br>բրոնխիալ ասթմա |
| Araceae                 | 1. Acorus calamus L.<br>2. Arum (A. elongatum Stev., A. maculatum L.)                                                                                   | ալպուճ, վաճ, բաղձտակ<br>նվիկ, լուֆ                   | ակիբ, խնկնդեղ<br>նվիկ                             | եղնջատենդ<br>բրոնխիալ ասթմա                   |
| Aristolochiaceae        | Aristolochia (A. rotunda L., A. clematitidis L., A. bottae Jaub. et Sp)                                                                                 | զրեանդ մուտահրաճ                                     | սղանդ բոլորաճե                                    | բրոնխիալ ասթմա                                |
| Asteraceae              | 1. Artemisia cina Berg.<br>2. Inula helenium L.<br>3. Matricaria recutita L. s. Matricaria chamomilla L.                                                | շեն, խորասանի<br>կղմուխ, ըռասան<br>իրիցուկ, պապունաճ | եղենահունդ, որդնաղեղ<br>կղմուխ, անտուղ<br>երիցուկ | բրոնխիալ ասթմա<br>բրոնխիալ ասթմա<br>եղնջատենդ |
| Berberidaceae           | Berberis vulgaris L.                                                                                                                                    | ծոր                                                  | ծոր, ծորենի                                       | եղնջատենդ                                     |
| Boraginaceae            | Lithospermum officinale L.                                                                                                                              | դուլպ                                                | քարասերմիկ, կաքավ-<br>կրկոտ                       | բրոնխիալ ասթմա                                |
| Brassicaceae            | 1. Brassica oleracea v. capitata L.<br>2. Lepidium sativum L.                                                                                           | քալամ, սլախաթըբ ըլ<br>յանտուրի<br>սիշատ              | կաղամբ<br>կոտեմ                                   | եղնջատենդ<br>բրոնխիալ ասթմա                   |

| 1              | 2                                                                                                                                                                                                                                                                                      | 3                                  | 4                                                | 5                                |
|----------------|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------------------------------|--------------------------------------------------|----------------------------------|
| Burseraceae    | Commiphora opobalsamum Engl.                                                                                                                                                                                                                                                           | բալսամ                             | բալսամածառ, ապր-սամ                              | բրոնխիալ ասթմա                   |
| Caprifoliaceae | Lonicera (L. caprifolium L., L. periclymenum L.)                                                                                                                                                                                                                                       | սարիմաթ ըլ հատի                    | անճուղար, ալժտերե, ցախակենառ                     | բրոնխիալ ասթմա                   |
| Cucurbitaceae  | Cucumis (C. sativus L., C. flexuosus L.)                                                                                                                                                                                                                                               | դաստ                               | վարունգ                                          | եղնջատենդ                        |
| Cypressaceae   | 1. Callitris quadrivalvis Vent. s. Thuja articulata Vahl.<br>2. Juniperus oblonga M. B.                                                                                                                                                                                                | դասյ<br>սանդարոս                   | կողա, օձվարունգ<br>խայտանճի, հողավոր<br>կենսածառ | եղնջատենդ<br>բրոնխիալ ասթմա      |
| Cyperaceae     | Cyperus longus L.                                                                                                                                                                                                                                                                      | յարյար                             | զինի                                             | բրոնխիալ ասթմա                   |
| Fabaceae       | 1. Melilotus (M. officinalis (L.) Desr., M. albus Desr.)<br>2. Glycyrrhiza glabra L.                                                                                                                                                                                                   | սօտ, կիպերիս                       | դուն, անուշահոտ<br>կիպերիս                       | եղնջատենդ                        |
| Lamiaceae      | 1. Hyssopus (H. angustifolius M. B., H. officinalis L.)<br>2. Marrubium vulgare L.<br>3. Mentha (M. pulegium L., M. longifolia (L.) Huds.)<br>4. Majorana hortensis Moench.<br>5. Teucrium chamaedrys L.<br>6. Thymus (T. cotschy-anus Boiss. et Hohenl., T. capitatus Hoff. et Link.) | աստուտակ, սուս<br>մշտիկ, զուֆա շոր | մատուտակ, մատուխ<br>մշտիկ                        | բրոնխիալ ասթմա<br>բրոնխիալ ասթմա |
|                |                                                                                                                                                                                                                                                                                        | ֆարասիոն<br>ֆուլանաճ               | մեղրածուծ<br>դադձ, հաբակ                         | բրոնխիալ ասթմա<br>եղնջատենդ      |
|                |                                                                                                                                                                                                                                                                                        | մարզանկօշ                          | մարզանկոշ                                        | եղնջատենդ                        |
|                |                                                                                                                                                                                                                                                                                        | կենարար, քամայտա-<br>րիոս          | կենարար, լերդախոտ                                | բրոնխիալ ասթմա                   |
|                |                                                                                                                                                                                                                                                                                        | հաշայ                              | ուլը                                             | բրոնխիալ ասթմա                   |

| 1                           | 2                                                                                                   | 3                                              | 4                                       | 5                                                           |
|-----------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------|------------------------------------------------|-----------------------------------------|-------------------------------------------------------------|
| Lauraceae<br>Liliaceae      | Laurus camphora L.<br>1. Aloe vera L.<br>2. Scilla (S. armena<br>Grossh., S. maritima L.)           | քաֆուր<br>սապոն<br>մկնատխ, խոզել               | քաֆուր<br>սապոն, հալվե<br>մկնատխ        | եղնջատենդ<br>բրոնխիալ ասթմա<br>բրոնխիալ ասթմա               |
| Nymphaeaceae<br>Oleaceae    | Nymphaea alba L.<br>1. Olea (O. europaea<br>L., O. sylvestris L.)<br>2. Jasminum fruticans<br>L.    | նոնոֆար, նիլուֆար<br>դայթուն<br>դիեան, եսոսմին | նոնուֆար<br>ձիթենի<br>վայրի հասմիկ      | եղնջատենդ<br>եղնջատենդ, բրոնխիալ<br>ասթմա<br>բրոնխիալ ասթմա |
| Plantaginaceae              | Plantago major L.                                                                                   | դառնալեզու, լիսան<br>բլ համալ                  | եղան լեզու                              | եղնջատենդ                                                   |
| Primulaceae                 | Cyclamen (C. vernum<br>SW., C. europaeum L.)                                                        | պուլսուր ի Մարեմ                               | արջտակ, թաղթ                            | բրոնխիալ ասթմա                                              |
| Ranunculaceae<br>Rhamnaceae | Nigella sativa L.<br>Zizyphus jujuba Mill.                                                          | շոնիդ, սև գնաիկ<br>յունապ                      | սև գնդիկ<br>ունար                       | բրոնխիալ ասթմա<br>եղնջատենդ, բրոնխիալ<br>ասթմա              |
| Rosaceae                    | 1. Rosa (R. centifolia<br>L., R. gallica L., R.<br>damascena Mill.)<br>2. Amygdalus amara<br>Hayne. | վարդ<br>լավդ բլ մուռ                           | վարդ<br>լեզի նշենի                      | եղնջատենդ                                                   |
| Solanaceae<br>Violaceae     | Phyalis alkekengi L.<br>Viola odorata L.                                                            | քաքանաճ<br>մանուշակ, պնաֆշայ                   | քաքանաճ, հարսնախոտ<br>բուրավետ մանուշակ | բրոնխիալ ասթմա<br>եղնջատենդ                                 |

բուստ են վիտամիններով, սերմերը՝ արիալուիզներով: Բույսը պարու-  
նակում է նաև հթերային յուղեր, որոնց կազմի մեջ մտնում են տեր-  
պեններ՝ պիններ, կամֆենը: Վերջիններս օծոված են մանրէասպան և  
հակաբորբոքային ազդեցությամբ, որոնցով կարող է պայմանավորված  
լինել բույսի հակապերիտիկ ակտիվությունը, բանի որ արդի տեսու-  
թյամբ վիրուսային ու մանրէական գործոնները կարևոր դեր են խաղում  
պերիտիկ հիվանդությունների պաթոգեննեցում [16, էջ 44—58]: Ինչ վե-  
րաբերում է կոծուկին և կապնդիկին, ապա բժշկարաններում խորհուրդ  
է արվում աչգ բույսերից պատրաստված դեղերն օգտագործել բրոնխիալ  
ասթմայի դեպքում: Կոծուկի մասին ունենք հետևյալ վկայությունը.  
«Սուղունատուլիոն... ինքն խոտ մըն է, որ տերեն նման է շինարին և ճալ-  
շիրի տերեխն և չերկանութիւնն՝ Ա. կանգուն. դադաթն նման է սամթի  
դադաթին, և սպիտակ ծաղիկ ունի, և տակն ալ սպիտակ է, ի բողկ կու  
նմանի, և ինքն ի թաց տեղեր կու բուսնի... թէ ի տակէն խմես՝ օգտէ  
հարադանին, լիզդացալին և ըսուպոլին ցաւուն» [15, էջ 535]: Փամա-  
նակակից տվյալներով, կոծուկի արմատներն ու պտուղը հարուստ են  
հթերային յուղերով և կումարինի ու ֆուրոկումարինի ածանցյալներով  
(պիմպինիկին, իզոպիմպինիկին): Իրն Սինան «Կանոնում» նույնպես  
նշում է այս բույսի օգտակարությունը բրոնխիալ ասթմայի դեպ-  
քում [2, էջ 476]:

Միջնադարյան հայ բժշկագետները բարձր են գնահատել *Araceae*  
ընտանիքից խնկեղեղի (միջնադարյան տերմինաբանությամբ՝ ալպուճ,  
վաճ, բաղշաակ)—*Acorus calamus* L. ու նվիկի—*Arum* (*A. elongatum*  
Stev., *A. maculatum* L.) հակապերիտիկ հատկությունները: Ամիրզով-  
լաթը խնկեղեղի մասին գրում է. «Ալպուճ... ինքն խոտի մի տակ է, որ  
ի Հնդկաց կու դայ... Եւ ինքն խիստ փորձած է այն ցաւուն, որ շարայ  
ասեն. յառաջի օրն սքնճայինով Ա. և կես դրամ խմցնեն, և Բ (2) օրն կես  
մթխալ (1 մթխալ=4,414 գ) և Գ (3) օրն Ա. դրամ խմցնեն, ամենայն  
ցաւն կերթայ: Եւ թէ տրորեն և վարդին ձէթն խառնեն և ի ջանձն օծեն,  
դան յիշած ցաւերն տանի» [15, էջ 35—36]: Նորագույն հետազոտու-  
թյունների շնորհիվ ապացուցված է, որ խնկեղեղը պարունակում է մի  
շարք ակտիվ նյութեր, այդ թվում կալամին արիալուիզը, աուկուրբին գլյու-  
կոզիդը, պինենով, կամֆենով, եվգենոլով և սեսքվիտերպեններով հա-  
րուստ հթերային յուղեր, խեժեր ու վիտամիններ: Հնդկական բժշկության  
մեջ նույնպես խնկեղեղը կիրառվում է ալերգիկ հիվանդությունների և  
մասնավորապես բրոնխիալ ասթմայի բուժման նպատակով [14, հ. 1,  
էջ 258]:

Ինչ վերաբերում է նվիկին, ապա Ամիրզովլաթը խորհուրդ է տալիս  
դա օգտագործել զանազան մաշկային հիվանդությունների և բրոնխիալ

ասթմայի բուժման համար. «Լուֆ, որ հայերն նվիկ ասեն. և լան այն է, որ սպիտակ լինի... և զիր տակն մեղրով օծես՝ օգտէ քալաֆին և նամաշին. ճէշ կու տայ... և օգտէ հին ըռուպոլին և դթոքն կիստկէ... և իր առնելուն շաքն Ա դրամ է» [15, էջ 203]: Նվիկը հարուստ է կենսաբանական ակտիվ նյութերով՝ ալկալոիդներով, գլյուկոզիդներով և սապոնիններով: Հատկապես սապոնիններով հարուստ է (մինչև 13, 5 տոկոս) Հայաստանի բնաշխարհում հանդիպող մի տեսակ՝ *A. elongatum* Stev.: Սա ներկայումս էլ կիրառվում է ժողովրդական բժշկության մեջ: Անհրաժեշտ է ուսումնասիրել նվիկի հակաալերգիկ ազդեցության մեխանիզմը ժամանակակից գիտության մեթոդներով:

Միջնադարյան բուսաբուժության մեջ բարձր էին գնահատվում սղանգի կամ զրեանդի—*Aristolochia* (*A. rotunda* L., *A. clematitis* L). տարբեր տեսակների բուժիչ հատկությունները: Իբն Սինան, Ամիրդովլաթ Ամասիացին խորհուրդ էին տալիս օգտագործել սղանգը բրոնխիալ ասթմայի բուժման համար: Ամիրդովլաթը նշում է. «Զրեանդ մոտահրաճ. և լան այն է, որ դունն զաֆրանին գունովն լինի և գէր... Եւ օգտէ ըռուպոլին և սարչին... Եւ Բ(2) դրամ յիրմէն տաս՝ օգտէ ամենայն դազանահարին... Եւ իր առնելուն շաքն Ա մթխալ է մինչև յԲ դրամն» [15, էջ 161—162]: Զինական բժշկության մեջ կիրառվել է զրեանդի մի այլ տեսակ—*A. debilis* Sieb. et Zucc նույն ցուցմունքներով: Նշված տեսակներից Կովկասի Ֆլորայի համար բնորոշ է *A. clematitis* L., Հայաստանի բնաշխարհում հանդիպում է մի այլ տեսակ—*A. bottae* Jaub et Sp., որը սակայն քիչ է ուսումնասիրված իբրև դեղաբույս:

Հակաալերգիկ հատկություններով են օժտված, ըստ ձեռագրի բժշկարանների տվյալների, *Asteraceae* ընտանիքից սերվող հետևյալ դեղաբույսերը՝ 1. եղենահունդը (շէհ, խորասանի)—*Artemisia cina* Berg. 2. կղմուխը (ըռասան)—*Inula helenium* L. 3. երիցուկը (իրիցուկ, պապունաճ)—*Matricaria chamomilla* L. Եղենահունդը հնում մշակվել է Հայաստանում: Ամիրդովլաթը գրում է վերջինիս մասին. «Շէհ, որ է խորասանի... լան այն է, որ դեղին լինի, որ Հայոց գայ... Եւ օգտէ հեուց և ըռուպոլին, զգոզն յորդորէ և զհայզն բանայ, և զտղան ձգէ, և զտափակ ճիճին հանէ... Եւ այն, որ ի Հայոց գայ, օգտէ ամենայն մահացու դեղոց... և առնելուն շաքն կէս դրամ է, բայց գլխուն ղէն է» [15, էջ 428]: Արդի բժշկության մեջ օգտագործում են միայն բույսի հակահեմինտային հատկությունները, մինչդեռ, ըստ միջնադարյան բժշկարանների տվյալների, եղենահունդի ներգործության ոլորտը շատ ավելի լայն է՝ հակաբորբոքային, հակաալերգիկ, հակաթունային և այլն: Քիմիական և դեղաբանական անալիզը ցույց տվեց, որ սանտոնին կոչված թունավոր նյութից բացի բույսը պարունակում է նաև եթերային

յուզեր՝ հակարորբրային և հակապերդիկ ակտիվությամբ, որը պայմանավորված է սեսքվիտերպենային սպիրտի՝ սեսքվիտերպենիդի— $C_{15}H_{24}O$  ինչպես նաև այլ բազադրամատերի՝ պինենի, տերպինենի, կամֆորայի առկայությամբ:

Ինչպես վկայում են ձևագիր աղբյուրները, կլմուխը, որը լայնորեն տարածված է Հայաստանի ֆլորայում, իր հակարորբրային, հակապերդիկ և հակահեղմինտային ներդրածությամբ մոտ է եղնահունդին: Առ բացատրվում է նրանց ֆիմիական հարապատությունը, եթերայուղային նման բազադրամատերով՝ պինեն, սեսքվիտերպեններ, սեսքվիտերպենային սպիրտներ և լակտոններ (հասկապես ալանտոլակտոնը և խամաղուլենը):

Ինչ վերաբերում է երիցուկին (երիցուկ, պապունաճ), ապա նրա կազմի մեջ մտնող եթերային յուզերը նույնպես հարուստ են սեսքվիտերպենով, սեսքվիտերպենային սպիրտներով և խամաղուլենով: Վերջինս օժտված է ուժեղ հակապերդիկ ներդրածությամբ և լավ կլինիկական արդյունք է ցուցաբերել բրնձխալ առթմայի և ալերգիկ դաստերիտների բուժման բնագավառում [17, էջ 212]: Երիցուկը բնորոշ է Կովկասի ֆլորային:

Միջնադարյան հայ բժշկապետները հղնշատենդն ու այլ ալերգիկ հիվանդությունները բուժել են ծորի հյութով: «Մոր, որ է պարպարիսն, որ է ամիրպարիսն, որ է զրիշքն—դրամ է Ամիրդովլաթ Ամասիացին,— և ինքն սև և կարմիր կու լինի, և լան աչն է, որ կարմիր լինի և նոր... և իր շարապն դարեան սրտթինն խաղեցնէ և ծաղիկն զսպինքն ի տեղացն տանի և սրէ. և օգտէ այն հերքունին, որ ի սաֆրայէ լինի. և շարային այլ օգտէ. և իր տալուն շաքն ԺԲ (12) դրամ է» [15, էջ 225]: Մորի արմատն ու կեղիք պարունակում են բերբերին ալկալոիդը, որն օժտված է մանրէասպան, սպաղմոլիտիկ և հիպոտենզիվ ներդրածությամբ: Մորի պրեպարատները հարուստ են նաև տերպենային սապոնիններով և վիտամիններով: Բույսը բնորոշ է Հայաստանի բնաշխարհին: Ժողովրդական բժշկության մեջ կիրառվում է ունատիզմի բուժման համար:

Հնում մեծ համբավ ուներ բնիկ հայկական քարասերմիկ (զուլպ) բույսը—*Lithospermum officinale* L.: Մեր բժշկաբաններում նրա մասին ասվում է. «Զուլպ. սպիտակ հունդ ունի, արծաթ կու նմանի. և տերեն նման է ձիթենոյ տերեխն, բայց յերկանուկ և էակուղ է և տափկուկ կու լինի. ի պինտ և ի բարձր տեղեր կու լինի. և ճղերն յերկան կու լինի և բարակ. և սէզի ճղի պես յամէն ճղի մէջ մանտր տերեններ ունի. և ամէն տերեխ ներքև ամրկեկ հունդ կու լինայ բոլոր, որպէս քար կու նմանի... և թէ ի հնդէն Բ դրամ ի սպիտակ գինով խմեն՝ զքարն հա-  
230

լէ և զհայդն բանայ և զգողն յորդորէ, և օգտէ ըռուպուին... և զսերմն չորացնէ» [15, էջ 306—307]: Այսինքն՝ քարասերմիկն ունեցել է հակաալիքիկ, հորմոնալ և միզամուղ հատկութիւններ: Սրանցից շատերը հաստատուիցին արդի դիտութեան կողմից: Այսպես, օրինակ, պարզվեց, որ քարասերմիկի հորմոնանման ակտիվութիւնը պայմանավորված է լիտոսպերմաթիվի (ֆենոլկարբոնաթթուների շարքից) առկայութեամբ: Կարելի է ենթադրել, որ բույսի հակաալիքիկ ներգործութիւնը կապված է հենց այդ հորմոնանման նյութի հետ, քանի որ բրոնխիալ ասթմայի, ինչպես նաև այլ ալիքիանների պաթոգեննեղում կարևոր դեր են խաղում հորմոնալ գործոնները [18, էջ 63—76]: Զինական բժշկութեան մեջ ալիքիկ հիվանդութիւնները և մասնավորապես եղնջատնեղը բուժվում են քարասերմիկի մի այլ տեսակից—*L. erythrorhizon* Sieb et Zucc պատրաստած պրոպրատներով [19, էջ 163]:

Միջնադարյան բժշկութեան մէջ լայնորեն օգտագործվել են մի շարք սննդաբույսերի բանջարեղենի (գինձ, հաղար, կոտեմ, կաղամբ, վարունգ) բուժիչ հատկութիւնները: Սրանցից կոտեմի (ռիշատ)—*Lepidium sativum* L. հունգը հայտնի էր իբրև հակաբորբոքային և հակաալիքիկ միջոց, որի մասին Ամիրդովլաթը գրում է. «Ռիշատ, որ հայերն կոտիմ ասեն... Եւ իր հունդն սուր է. լամն այն է, որ ածուց լինի... Եւ օգտէ տալուսայլապին և զերեսին մանն տանի... Թէ խմես և թէ օծես՝ ամենայն դիմօք օգտէ. և հունդն օգտէ ըռուպուին և ղկուրծքն յիստկէ... և ղկանանց արունն կու յորդորէ և զտղան ձգէ և ղմերձատրութիւնն յաւելցնէ... Թէ օծես՝ օգտէ պիսակին և բորին և քորին. և առնելուն շաքն Ա մթիալ է, բայց բշտին ղէն կառնէ» [15, էջ 492]: Ընդարձակ մեջբերումից ակնհայտ է դառնում կոտեմի հակաալիքիկ ներգործութեան զուգակցութիւնը հորմոնալ ակտիվութեան հետ, որը նկատվում է նաև այլ դեղաբույսերի, մասնավորապես վերոհիշյալ քարասերմիկի մոտ: Արդի տվյալներով, բույսը հարուստ է եթերային յուղերով, սինիգրին գլյուկոզիդով և վիտամիններով:

Արեւելքի անվանի բժշկապետներից շատերը (Իբն Սինան, Մխիթար Հերացին, Իբն Բայթարը, Ամիրդովլաթ Ամասիացին) եղնջատնեղի բուժման համար խորհուրդ են տվել դիմել *Cucurbitaceae* ընտանիքից սերվող մի քանի բուսատեսակներից պատրաստած դեղերի: Սրանց թվին են պատկանում վարունգը (ղսատ)—*Cucumis sativus* L. և կողան կամ օձվարունգը (ղսայ)—*Cucumis flexuosus* L. Առաջինի մասին ունենք հետևյալ վկայութիւնը: «Ղսայ... զղաֆրան կու խաղեցնէ և զգողն յորդորէ և զծարան կտրէ, և օգտէ բշտին... Եւ տերեն օգտէ շարային, որ ի պալղամէ լինի, օծելով» [15, էջ 316]: Մոտավորապես նույն բուժիչ հատկութիւնները վերագրվում էին կողային, որը

Հետո մշակվում էր Արեւելքի տարրեր երկրներում, այդ թվում Կիլիկիայում:

Միջնադարյան ղեղազիրտարաններում բրոնխիալ տաթմայի բուսաբուժության մեջ օգտագործվում էր ալժաերեր (սարիմաթ քլ հատի) — *Lonicera սեռից* Հաշիական բնաշխարհում հանդիպում է *Lonicera caprifolium* L. տեսակը, մինչդեռ *L. periclymenum* L. ձևը բնորոշ է նվրտապական երկրների ֆլորային և հիշատակվում է անտիկ հեղինակների գործերում *Periclymenon* անվան տակ [20, էջ 253]։ Ամիրզովլաթ Ամասիացին հետևյալն է գրում ալժաերերի մասին. «Ենքն խոտ մըն է, որ պուզուն-պուզուն է, հղեր կունենայ հաստ, և սպիտակ ծաղիկ ունի, և մանուր միրզ ունի. թէ մեկ քանի օր՝ յօրն 1(30) դրամ մրդէն պիտով խմեն, դիւայծալն հալէ և զգոյն յորդորէ և զփորն կաղցացնէ, և զաղին քնկերն ձգէ և օգտէ բուսպուին... և օգտէ գինաֆասին, փորձիւ» [15, էջ 523]։ Այսպիսով, հայ բժշկապետները հայտնաբերել էին բույսի հակաալերգիկ հատկութիւնները։ Նորագույն ուսումնասիրութիւնները ցույց են տվել, որ *Lonicera սեռին* պատկանող բույսերը պարունակում են էթերային յուղեր մանրէասպան ակտիվութեամբ, ինչպես նաև ֆլավոնոիդներ, սալիցիլաթթու, սապոնիններ և վիտամիններ։

Եթերային յուղերով հարուստ *Cupressaceae* բնաճիւղից բրոնխիալ տաթմայի բուժման համար հայ բժշկապետներն առաջադրել էին գիճին (յարյար) — *Juniperus oblonga* M. B. և հողավոր կենածառը (սանդարօս) — *Thuja articulata* Vahl., ըստ որում Հայաստանի բնաշխարհում հանդիպում է միայն առաջինը, որի մասին ունենք հետևյալ վկայութիւնը. «Յարյար, որ է վարի սարվն. մեծ կու լինի և փոքր ալլ. և լան այն է, որ կարմիր լինի. և իր հատն օգտէ կրծոց ցաւուն և ըսուպուին և գինաֆասին. և թէ ծիւսն՝ ամենայն գաղանաճարի. և իր տալուն շարն Ա դրամ է» [15, էջ 379]։ Նույն նպատակներին էին ծառայում հողավոր կենածառից պատրաստած պրեպարատները։ Չինական բժշկութեան մեջ կիրառվում էր մի ալլ տեսակ — *T. orientalis* L. իբրև հակաալերգիկ և տոնուսը բարձրացնող ղեղամիջոց [19, էջ 256]։ Քիմիական և ղեղաբանական ուսումնասիրութիւնները ցույց տվեցին, որ վերջինիս էթերային յուղերն իրենց բաղադրութեամբ (պինեն, սեսքվիտերպենային սպիրտ) հատուկ են հակաալերգիկ ղեղաբույսերից շատերին։

Եթերային յուղերով է պայմանավորված հիմնականում նաև անուշահոտ կիպերի (սօտի) — *Cyperus* L. հակաալերգիկ ազդեցութիւնը, որի մասին հիշատակվում է մեր աղբյուրներում. «Սօտ, որ է կիպերիս... ինքն խոտի տակ է և անուշահոտ է... և օգտէ սնկան և ամենայն պեղծ չերմերուն, և զերեսին զգոյնն պայծառ անէ... և շարային տէրն թէ յիր

Թաժայ տերեւին վերայ պանկի, նա շատ շահ ունի. և իր առնելուն շահն կէս դրամ է» [15, էջ 508—509]: Հայաստանի բնաշխարհում հանդիպող կիպերի տեսակները՝ *C. longus* L., *C. rotundus* L. հարուստ են եթերային յուղերով, որոնք օժտված են մանրէասպան հատկութիւններով: *C. rotundus* ձեւը կիրառւում է ժողովրդական բժշկութեան մեջ:

Ալեւրգիկ հիվանդութիւնների բուսաբուժութեան մեջ կարևոր դեր են խաղացել Fabaceae ընտանիքից սերվող դեղաբույսերը: Սրանցից են իշապուլուտ (աքլիլ մէլիք) — *Melilotus* սեռին պատկանող դեղին կամ դեղատու և սպիտակ իշապուլուտները՝ *M. officinalis* (L.) Desr., *M. albus* L., որոնք լայնորեն տարածված են Հայաստանի ֆլորայում: Ամիրգով-լաթ Ամասիացին այսպես է նկարագրել իշապուլուտը. «Աքլիլմէլիք... և ինքն խոտ մըն է, որ Ա աւուր լուսին կու նմանի. և սպիտակ և դեղին կու լինի. լաւն այն է, որ նոր և դեղին լինի և պինտ... և գիր հատն որսորդին կառնեն և իրենց որսած մսին մէջ դնեն, որ չի հոտիր... և այս խոտս ղգոզն յորդորէ և ղհայզն կու բանայ... և ղթոքն կու յիստկէ, և ղսրտին խաղալն կու տանի, և ընուպոին, և հաղին, և արծուոց՝ օգտէ» [15, էջ 97—98]: Ինչպես երևում է մեջբերումից, իշապուլուտը մանրէասպան, հականեխիչ, հակաբորբոքային հատկութիւնների կողքին օժտված է նաև հորմոնալ ակտիվությամբ: Սրանք բոլորն էլ կարևոր նշանակութիւն ունեն բրոնխիալ ասթմայի բուժման համար, քանի որ վերջինիս պաթոգեննեղում առաջնակարգ դեր են խաղում վիրուսային-մանրէական և հորմոնալ գործոնները: Բույսի քիմիական և դեղաբանական ուսումնասիրութիւնները հայտնաբերեցին, որ իշապուլուտը մեկլիտին և մեկլիտոզիդ գլյուկոզիդներից բացի պարունակում է սապոնիններ, կոմարին և նրա ածանցյալները, վիտամիններ: Փորձերը հաստատել են նաև իշապուլուտի մանրէասպան և հայտնաբերել կոլիսիցինանման հատկութիւնները [14, հ. 2, էջ 110]: Հետազոտութիւններով ապացուցված է նաև, որ կոմարինը և ֆուրոկոմարինը կոլիսիցինանման ակտիվութիւնից բացի օժտված են հորմոնանման ներգործությամբ [20, էջ 515—525]:

Հնում վերին շնչառական ուղիների ալերգիկ հիվանդութիւնների բուսաբուժութեան մեջ բարձր էին գնահատվում Fabaceae ընտանիքից սերվող և Հայաստանի բնաշխարհում տարածված մատուռակ (սուռ) — *Glycyrrhiza glabra* L. բույսի բուժիչ հատկութիւնները: Ժամանակակից քիմիական անալիզի տվյալներով, նրա կազմի մեջ են մտնում գլիցիրիզինային և գլիցիրիտինային թթուները, որոնք օժտված են հորմոնալ (կորտիզոնանման), էստրոգեն, հակաալերգիկ ներգործությամբ: Հետևապես միջնադարյան հայ դեղագիտութեան փորձն այս դեպքում էլ հաստատվում է արդի գիտութեան կողմից:

Չեռագիր բժշկարանների բարդ զեղատոմսերում մաշկային և վերին շնչառական ուղիների աղերգիկ հիվանդությունների բուժման համար հաճախ հանդես են գալիս Lamiaceae, Lauraceae և Rosaceae ընտանիքներին պատկանող զեղարույսեր, որոնք հարուստ են եթերային յուղերով և այլ ակտիվ միացություններով։ Հատկապես բազմաթիվ են Lamiaceae ընտանիքից սերվող տեսակները, որոնցից կարելի է նշել հետևյալները՝ 1. մշտիկը (զուֆա չոր) — *Hyssopus* (*H. angustifolius* M. B., *H. officinalis* L.), 2. մեղրածածը (ֆարասիոն) — *Marrubium vulgare* L., 3. գաղձը (ֆուլթանաճ) — *Mentha* (*M. longifolia* (L.) Huds., *M. pulegium* L.) 4. մարզանկոշը — *Majorana hortensis* Moench., 5. կենաբարը (քամալտարիս) — *Teucrium chamaedrys* L., 6. ուրջը (հաշայ) — *Thymus* (*T. kotschyanus* Boiss. et Hoch., *T. capitatus* Hoff. et Link. Ամիրզողվաթ Ամասիացին այսպես է նկարագրում մշտիկը. «Զուֆա չոր. և հայերեն մշտիկ ասէ... և ինքն ի յածուներն կու բուսնի... և կրծոց և թորին օգտէ, և զպալզամի զիճութիւնն յանձնէն կու հանէ, և հալին և բուռալուն, որ հին լինայ, և որոշ կուրծքն խոշորութիւն լինայ» [15, էջ 159]։ Մշտիկի եթերային յուղը, ըստ արդի տվյալների, իր կազմի մեջ մտնող պինենի, կամֆենի, պինոկամֆոնի, ցինեոլի և սեսըվիտերպենների շնորհիվ ունի ուժեղ մանրէասպան, հակաբորբոքային և հակաաղերգիկ ներգործություն։ Հայաստանի բնաշխարհում հանդիպում է մշտիկի մի տեսակ *H. angustifolius* M. B., որը հնում հայտնի էր իր բուժիչ հատկություններով և արտահանվում էր հարևան երկրները։

Մշտիկին մոտ է մի այլ բնիկ հայկական բույսի՝ մեղրածուծի (ֆարասիոն) — հակաաղերգիկ ազդեցությունը։ «Անգիտաց անպէտում» հետեւյալ վկայությունը կա. «Ֆարասիոն... և ինքն շորեքդէն խոտ մըն է. և մէջն հանկուց ունի. և տերեն թանձր է և ծանր. սուր չէ, բուրբ է. և երեսն խոշոր է. և ինքն ի փողոցնին կու բուսնի, Ա՛ զարունն կու բուսնի, և Ա՛ աշունն. և համն լեղի է, և սպիտակ կու բշտէ տերեւն... և օգտէ բուռալուն և խղձակելուն, և կրծոցն և զթորին... և զհալչն բանայ. և զտղան կու ձգէ և զմահացու զեղոց զշարութիւնն տանող զեղոցն է... առնելուն շաքն Ա զրամ է... և իր փոխանն զուֆան է» [15, էջ 611—612]։ Ժամանակակից տվյալների համաձայն մեղրածուծը պարունակում է եթերային յուղեր, մառուրին լաբոնը —  $C_{21}H_{28}O_3$ , ալկալոիդներ և տանիդներ, որոնք ցուցաբերում են բուժական լայն սպեկտր։

Բրոնխիալ ասթմայի բուսաբուժության մեջ կիրառվող ակտիվ զեղարույսերից է եղել կենաբարը, որի մասին Ամիրզողվաթ Ամասիացին գրում է. «Քամալտարիոսին կենաբար կասեն. ճղկներ է և տերեւն է, որպես կաղնի տերեւ. և ծաղիկն ծիրանի է... և թէ խմես և թէ սպեղանի առնես՝ օգտէ ճարապին, որ ի յաշքն կենայ. և օգտէ բուռալուն և հին

հազիւ... և իր առնելուն շաքն Ա մթխալ է... և թէ քիչ մի ջրով եփեն և քամեն և Գ օր՝ ամէն օր Լ (30) դրամ անօթուց խմեն տաքուկ, զհայզն բանայ և օգտէ հին ցաւերուն, որ ի կուրծքն լինայ» [15, էջ 594]: Կենարարը տարածված է մեր բնաշխարհում:

Մաշկի և վերին շնչառական ուղիների ալերգիկ հիվանդութիւնների բուժման նպատակով հայ բժշկապետները խորհուրդ են տվել օգտագործել ուրցի և դաղձի պրեպարատները Ամիրդովլաթը գրում է. «Դաղձ, որ է ֆուֆանաճն... վայրի լինի. լան ալն է, որ տերեւն նօսր լինայ... և թէ էփեն և յանձն քսեն՝ դոռն և զքոռն տանի. և օգտէ ալն գողութեան, որ ի պալղամէ լինի. և շարային այլ օգտէ. և տավալին և տայուլֆին այլ օգտէ խմելով. և իր առնելուն շաքն Ա մթխալ է» [15, էջ 117]: Եթե դաղձը կիրառվում էր մաշկի ալերգիաների բուսաբուժութիւնում, ապա ուրցն ալիւի պիտանի էր բրոնխիալ ասթմայի դեպքում, ինչպես վկայում են մեր բժշկարանները. «Հաշայ... և ծաղիկն կարմրեւ կու բշտէ. և տերեւն սպիտակ է. լան ալն է, որ նոր լինի... և օգտէ ակոացաւութեան, յորժամ որ հետ կերակրին ուտեն... և օգտէ ըռուպոլին և արուն թքնելուն. և իր առնելուն շաքն Ա դրամ է» [15, էջ 237]: Դաղձի եթերային յուղերը պարունակում են լինալոլ և պուլիզոն կոչված բաղադրամասերը, իսկ ուրցը հարուստ է թիմոլով և կարվաքոլով, որոնք ցուցաբերում են մանրէասպան, ցավազրկող և սպաղմոխտիկ հատկութիւններ: Հայաստանի բնաշխարհում հանդիպում են այս 2 սեռի՝ *M. longifolia* (L) Huds, *T. kotschyanus* Boiss. et Hoh. տեսակները, որոնք ժողովրդական բժշկութեան մեջ առավել օգտագործվող դեղամիջոցներից են:

Զեռազիր բժշկարաններում եղնջատինդի և մաշկային այլ ալերգիաների բուժման համար առաջարկվում է քաֆուրը—*Laurus camphora* L. ծառի յուղը, որը Հայաստան է բերվել հեռավոր արեւադարձային երկրներից. «Քաֆուր, որ է հայտնի,—գրում է Ամիրդովլաթը,—Գ (3) ցեղ է՝ դալըսուրի և ըռուպահի և չինի. հովցնող է և խաղեցնող է... և թէ խմես՝ օգտէ շարային. և թէ վարդեջրով անձն օծես՝ օգտէ հասպային. և թէ խմես՝ օգտէ ամենայն տաք ջերմերուն. և իր առնելուն շաքն Ա կուտ է (1 կուտ=0,184 գ)» [15, էջ 583]: Արդի տվյալներով, քաֆուրի եթերային յուղը պարունակում է կամֆորա բիցիկլիկ կետոն, ցինեոլ, կարվաքոլ, պինեն, բոռնեոլ և սեսքվիտերպենային սպիրտ: Զինական բժշկութեան մեջ քաֆուրը օգտագործվում է մաշկային հիվանդութիւնների բուժման նպատակով, ինչպես նաև իբրև ընդհանուր տոնուսը բարձրացնող դեղամիջոց [19, էջ 100]:

Միսիթար Հերացու և Ամիրդովլաթ Ամասիացու բժշկարաններում իր հակաալերգիկ ակտիվութեամբ աչքի է ընկնում վարդի յուղը: Վերջինս, ըստ արդի տվյալների, հարուստ է եթերային յուղերով, որոնց կազմի

մեջ են մտնում գերանիտը, եվգենոլը և այլ բաղադրամասեր մանրէապան, ցավազրկող և տոնուար բարձրացնող հատկություններով: Վարդի պրեպարատները ժողովրդական բժշկության մեջ օգտակար են համարվում մի շարք ինֆեկցիոն-ալերգիկ հիվանդությունների բուժման համար, այդ թվում նաև բրոնխիալ ասթմայի դեպքում [17, էջ 209]: Բուժական տեսակետից հետաքրքրություն է ներկայացնում Հայաստանում մշակվող *Rosa centifolia* L. տեսակը:

Գլյուկոզիդներով, ալկալոիդներով և կենսաբանական այլ ակտիվ նյութերով հարուստ Liliaceae ընտանիքից հակաալերգիկ հատկություններով էին հայտնի հնում հարվեն (սապո)—*Aloe vera* L. և մկնասոխը (խոզէլ)—*Scilla* (*S. maritima* L.): Ամիրգովաթը վերջինիս մասին գրել է. «Խոզէլն, որ է մկնասխն... և ինքն ի յանապատ լիքինքն կու լինալ... և թէ խորվեն և օծեն քալաֆին և տալուտալապին՝ շատ օգտէ հին բուսպոլին և հազին և շունչն խղձակելուն... և իր տալուն չարն Ա մթխալ է» [15, էջ 179]: Արդի տվյալներով, բույսը պարունակում է սցիլիրոզիդ, սցիլարեն  $A-C_{35}H_{52}O_{13}$  գլյուկոզիդները, սիտոստերին և այլ ակտիվ միացություններ: *S. maritima* L. բնորոշ է միջերկրական ֆլորային, սակայն Հայաստանում էլ հանդիպում են այս սեռի ներկայացուցիչները, օրինակ, *S. armena* Gross, որը հարուստ է ալկալոիդներով և ունի զեղային նշանակություն: Ինչ վերաբերում է հարվենին, ապա միջնադարյան բժշկության մեջ այն կիրառվում էր մի շարք հիվանդությունների այդ թվում նաև բրոնխիալ ասթմայի բուժման համար: Դրա մասին ունենք վկայություն. «Սապո. ինքն սուսանին պէս խոտի քամուրս է... և օգտէ բթին խոցերուն և դաշքն սրացնէ. և զկիծն տանի. և թէ օծես՝ օգտէ բուսպոլին և խղձակելուն և ստամոքսին» [15, էջ 517]: Արդի տվյալներով, հարվենի նյութը պարունակում է անտրազոլոնոզիդներ, այդ թվում նաև ալոլինը— $C_{21}H_{22}O_9$  և ունի բուժական ներգործության լայն սպեկտր: Վերոհիշյալ բույսերի հակաալերգիկ ազդեցության մեխանիզմը լուրջ ուսումնասիրության առարկա պիտի դառնա: Կարելի է ենթադրել, որ նրանց կազմի մեջ մտնող գլյուկոզիդները և ալկալոիդներն օժտված են հորմոնանման հատկություններով, քանի որ վերջին տարիների հետազոտությունները ցույց տվեցին, որ բուսական հորմոնների կենսաբանական ակտիվությունը պայմանավորված է մի շարք միացությունների, այդ թվում գլյուկոզիդների, ալկալոիդների, կումարինների, ֆուրոկոումարինների, ֆլավոնոիդների և ֆենոլկարբոնաթթուների առկայությամբ [21, էջ 515—525]:

Այսպիսի ակտիվություն են ցուցաբերում նաև, ըստ միջնադարյան աղբյուրների, Nymphaeaceae, Oleaceae, Plantaginaceae, Ranunculaceae, Violaceae ընտանիքներից սերվող զեղաբույսերը: Այսպես, օրի-

նակ, նունուֆարը. կամ նիլուֆարը— *Nymphaea alba* L., որը հանդիպում է Հայաստանի բնաշխարհում, բազմիցս հիշատակվում է Մխիթար Հերացու և Ամիրդովլաթ Ամասիացու բժշկարաններում իբրև հակաալերգիկ դեղամիջոց: Ըստ նորագույն ուսումնասիրությունների, բույսը պարունակում է նիսֆեին ակալոիդը, որն օժտված է մանրէասպան և հորմոնալ ներգործությամբ: Միջնադարյան բժշկապետները նունուֆարի բացակայության դեպքում խորհուրդ էին տալիս օգտագործել մանուշակը (պնաֆշայ)— *Viola odorata* L., որը լայնորեն տարածված է Հայաստանի լեռնաշխարհում: Ամիրդովլաթը գրել է. «Պնաֆշայ, որ է մանուշակն... ինքն ի լերունքն և ի ածուենիքն կու լինի. լան ալն է, որ գունն կուշտ կու լինի և հոտն ուժով... թէ զձէթն ի պարասին գլուխն օժես՝ օգտէ, և գերեսին խոշրութիւնն տանի և զպոկնաց շուկակն տանի... և օգտէ հազին, որ ի տաքութենէ լինի. զկուրծքն և զլերդն կակղացնէ... և թէ զանձն օժես իր ձիթովն՝ օգտէ հասաֆին և շարային և հերքունին. ի լղալարէն առնուի Ե (5) դրամ և ի շորէն Բ (2) դրամ... և իր փոխանն նիլուֆարըն է և մատուտակն է իր չքօքն» [15, էջ 477—478]: Արդի տվյալներով, մանուշակը պարունակում է ակալոիդներ, վիտամին գլյուկոզիդը—  $C_{36}H_{37}O_{17}$  սապոնիններ և եթերային յուղեր, որոնց առկայությամբ պայմանավորվում են բույսի բուժիչ հատկությունները: Վերոհիշյալ հատկություններով է օժտված նաև եզան լեզուն (գառնալեզու— լիսան ըլ համալ)— *Plantago major* L. բույսը, որը տարածված է Հայաստանի բնաշխարհում: Զեռագրային աղբյուրներում նշված է. «Գառնալեզու, որ է լիսան ըլ համալըն. լան ալն է, որ մեծ լինի... և իր քամուքսն օգտէ իրիկամաց և բշտին խոցերուն... և իր ջուրն լերդին և փայծղան զկալուածն բանայ. և զսերմն կտրէ. և ամենայն տաք ուռէցնուն և շարային և նամլային և կրակի այրածին... և զպեղծ խոցերն ողջացնէ և կերուածին ալ օգտէ... առնելուն չաքն ի հնդէն Ա մթխալ» [15, էջ 110]: Ըստ արդի դեղաբանական անալիզի, բույսը պարունակում է աուկուբին գլյուկոզիդը, ստերոիդ սապոնիններ և վիտամիններ:

Միջնադարյան հայ բժշկապետները բրոնխիալ ասթմայի բուժման համար խորհուրդ էին տալիս օգտագործել բնիկ հայկական մի բույս՝ սև գնդիկը (շոնիկ)— *Nigella sativa* L.: Վերջինս հին Հայաստանում, ինչպես և լոշտակը, դարձել էր պաշտամունքի առարկա իր ուժեղ հորմոնալ ազդեցության շնորհիվ [22, էջ 71]: Ամիրդովլաթն այսպես է գրել. «Շոնիկ, որ է սև գնդիկն... օգտէ ակոացալին և հով զլիսու ցաւուն, և աղուեսցաւուն. թէ չորացնեն և ուտեն՝ օգտէ զուբամին. և իր եղն օգտէ ֆալճին և լակուային և ըռուպույին, որ զշունչն չկարէ կրկնել. և զկաթն յաւելցնէ... և առնելուն չաքն կէս մթխալ է» [15, էջ 436]: Նորագույն հետազոտությունները ցույց տվեցին, որ սև գնդիկը հարուստ է եթերային

յուղերով, սապոնիններով և պարունակում է որոշ քանակությամբ ալկալոիդներ։ Անհրաժեշտ է ավելի մանրամասն ուսումնասիրել ժողովրդական բժշկության մեջ կիրառվող այս զեղարույսի հակաալերգիկ հատկությունները։

Ձեռագիր պրոյուրներում բարձր էր գնահատվում Oleaceae ընտանիքից սերվող զեղարույսերի հակաալերգիկ ազդեցությունը։ Հատկապես մեծ համբավ էին վայելում ձիթենու պրեպարատները— Olea (O. europaea L., O. sylvestris L.): Գեուս Իրն Սինան «Կանոնում» գրել է. «Վայրի դաշթունին յուրը օգտակար է շարային... սե ձիթապտուղը կորիզների հետ միասին իբրև ծխանելիք օգտակար է բուսալույին և ընդհանուր առմամբ թորի հիվանդություններին» [23, էջ 247]։ Նույն կարծիքն են արտահայտել և հայ բժշկապետները։ Ձիթենին վայրի վիճակում հանդիպում է Կովկասի ֆլորայում։ Ձիթենու կուլտուրան մշակվում էր հին Հայաստանի տարբեր վայրերում և մասնավորապես Կիլիկիայում [8, էջ 386]։ Ժամանակակից տվյալներով ձիթենին պարունակում է հետևյալ կենսաքանակաին աղտով նյութերը՝ օլեյնոպեին գլյուկոզիդը— $C_{25}H_{32}O_{13}$ , ֆլավոնոիդներ, ֆիտոստերին և եթերային յուղեր, որոնց կազմի մեջ են մտնում կամֆենանոման միացություններ և եվգենոլը։ Ձիթենու պրեպարատները օժտված են հակաբորբոքային, հիպոտենզիվ և հորմոնանոման հատկություններով։ Oleaceae ընտանիքից է սերում նաև վայրի հասմիկ (զիեան, հասամին)— Jasminum fruticans L. բնիկ հայկական բույսը, որը միջնադարյան բուսաբուծության մեջ կիրառվում էր բրոնխիալ ասթմայի բուժման համար։ Ամիրդովլաթը գրել է նրա մասին. «Ձիեան. ինքն հասամինն է. լան այն է, որ նոր լինի... օգտէ ակնջին և գլխին խոցերուն... և թէ այրես և դառն թղով խառնես և սե ու սպիտակ պահակին օժես՝ օգտէ... և թէ Զ (6) դրամ ձի (120) դրամ ջրով եփես մինչև կէսն մնայ, քամես և իր չքօքն շաքար խառնես և ի դիվամ բերես՝ օգտէ հին հաղերուն և զխնաֆասին... և օգտէ բուսալուին և զխնաֆասին» [15, էջ 154—155]։ Վայրի հասմիկը, արդի տվյալներով, հարուստ է ալկալոիդներով, գլյուկոզիդներով, եթերային յուղերով ու վիտամիններով։ Նրա հակաալերգիկ ազդեցության ուսումնասիրությունը ժամանակակից մեթոդներով կարող է հանգեցնել կարևոր արդյունքների։

Միջնադարյան բժշկապետների առաջադրած բարդ զեղատոմսերում, որոնք նշանակվում էին ալերգիկ հիվանդությունների բուժման համար, աչքի են ընկնում ունարի— Zizyphus jujuba Mill. պատրաստուկները։ Բույսը հանդիպում է Հայաստանի բնաշխարհում։ Ամիրդովլաթը նշել է. «Յունապն. լան այն է, որ քաղցր լինի և ծակ չունենայ, և կարմիր լինի և մսալի... օգտէ շարային և մաշարային և կրծոց

և թռչին և հագին. և զստամորին այրին կու տանի և զարուն կու յիտակէ» [15, էջ 398]: Զինական բժշկության մեջ ունարն օգտագործվում է բրոնխիալ ասթմայի բուժման համար: Ըստ քիմիական և դեղաբանական անալիզի, բույսը պարունակում է ցավազրկող դիգլիֆաթթու, տրիտերպեն բետուլին և վիտամիններ: Այսօր նա նորից կարող է մտնել ակերգարանության բուժական զինանոցը: Հայ բժշկապետները բարձր են գնահատել նաև Հայաստանի բնաշխարհի մի այլ դեղաբույսի՝ քաքանաճի— *Physalis alkekengi* L. բուծիչ հատկությունները բրոնխիալ ասթմայի ժամանակ: Դրա մասին ունենք հետևյալ վկայությունը. «Քաքանաճ. ինքն կարմիր միրգ մըն է, ամենի մէջ է. և ինքն շնախաղողին ցեղէն է. և լամւ այն է, որ կարմիր լինի. և թմրեցնող է. թէ խմես՝ զգլխուն ցամ խաղեցնէ... և իր հատն օգտէ ակոացաւութեան. և թէ իր ջուրն քամէ՝ օգտէ ականջին ցաւուն, որ հին լինի... օգտէ բռուպուին և զինաֆասին... և թէ կնիկ մարդ առաւօտուն է (7) օրն է (7) հատ կու տայ՝ այլ չի պատեղտրի» [15, էջ 584—585]: Ինչպես երևում է մեղբերումից, քաքանաճն օժտված է ցավազրկող, հակաբորբոքային և հորմոնալ ներգործությամբ: Ըստ նորագույն տվյալների, բույսը պարունակում է ալկալոիդներ, ֆիդալին կոչված նյութը և այլ ակտիվ միացություններ, որոնք տակավին քիչ են ուսումնասիրված: Բույսը լավ ծանոթ է ժողովրդական բուժականին:

Այսպիսով, միջնադարյան հայ բուսաբուժության մեջ կիրառվող դեղաբույսերի որոշ մասը ցուցաբերում է հակաալերգիկ ակտիվություն, ըստ որում հայ բժշկապետների փորձը հաճախ հաստատվում է ժամանակակից գիտության կողմից: Վերոհիշյալ դեղաբույսերի հակաալերգիկ հատկությունները, ինչպես ցույց է տալիս ուսումնասիրությունը, պայմանավորված են առաջին հերթին եթերային յուղերով և մասնավորապես սրանց բաղադրամասերով՝ տերպեններով, սեսքվիտերպեններով, սեսքվիտերպենային սպիրտներով, կամֆորայով, բոոնեոլով, թիմոլով, եվգենոլով, խամազուկենոլ և մի շարք այլ միացություններով, որոնք օժտված են մանրէասպան, ցավազրկող և սպաղմոլիտիկ ուժով:

Հակաալերգիկ դեղաբույսերի ներգործության մեխանիզմում կարևոր դեր են խաղում նաև գլյուկոզիդները, ալկալոիդները, սապոնինները, կոամարինը, ֆուրոկոլմարինը և սրանց ածանցյալները, որոնցից շատերը ցուցաբերում են մանրէասպան և հորմոնալ ակտիվություն: Հաշվի առնելով վիրուսային-մանրէական, հորմոնալ, ինչպես նաև մի շարք այլ գործոնների դերն ալերգիկ հիվանդությունների առաջացման և ախտածնության գործում, հանգում ենք այն եզրակացությանը, որ միջնադարյան հայ բժշկապետները փորձնական ճանապարհով մշակել

ևն Հախաթուրյանների բաժան մի որոշ ճշտությամբ, որ լուրջ հետազոտություն է ներկայացնում ժամանակակից անհրաժեշտությունը համար

С. А. ВАРДАНИЯ

## ВЗГЛЯДЫ СРЕДНЕВЕКОВЫХ АРМЯНСКИХ ВРАЧЕЙ ОТНОСИТЕЛЬНО АЛЛЕРГИЧЕСКИХ БОЛЕЗНЕЙ И ИХ ЛЕЧЕНИЯ

### Резюме

Изучение трудов средневековых армянских врачей: Мхитара Гераци (XII в.), Григориса (XIII в.), Амирдовлата Амасиаци (XV в.) показало, что они уделяли большое внимание вопросам этиопатогенеза, клиники и лечения аллергических болезней. В частности, в труде Мхитара Гераци «Утешение при лихорадках» (1184 г.) в разделе «однодневных» лихорадок рассматриваются некоторые виды физических, химических, пищевых и нервно-психических аллергий, описываются их симптомы и методы лечения (фитотерапия, диетотерапия и физические процедуры).

Вопросы лекарственного лечения аллергических болезней (бронхиальная астма, крапивница) находились в центре внимания выдающегося армянского врача Амирдовлата Амасиаци, который, продолжая разрабатывать систему этиопатогенетической терапии, предложенную Мхитаром Гераци, внедрил целый ряд новых растительных препаратов.

Изучение лекарственных растений противоаллергического действия, встречающихся в сложных прописях книги «Утешение при лихорадках» Мхитара Гераци и энциклопедического труда Амирдовлата Амасиаци по лекарствоведению — «Ненужное для неучей» (1482 г.) показало, что подавляющее большинство их принадлежит к семействам, богатым эфирными маслами с выраженными антибактериальными, противовоспалительными, обезболивающими и спазмолитическими свойствами, обусловленными присутствием в них терпенов, сесквитерпенов, сесквитерпеновых спиртов и лактонов, камфоры, тимола, борнеола, эвгенола, хамазулена и некоторых других соединений.

Кроме того, по данным современного химического и фармакологического анализа, многие из вышеупомянутых растений, которым в средневековой армянской медицине приписывались противоаллергические свойства, богаты глюкозидами, алкалоидами, флавоноидами, стеринами, сапонинами, кумаринами и фурукумаринами, проявляющими противовирусное, антибактериальное и гормональное действие, столь важное с точки зрения этиопатогенеза аллергических болезней.

Все это говорит о том, что средневековые армянские врачи эмпирическим путем разработали рациональную систему фитотерапии аллергических болезней, представляющую большой интерес и для современной аллергологии.

# Կ Ի Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

- 1 Гиппократ, Избранные книги, М., 1936.
- 2 Ибн-Сина, Канон врачебной науки, кн. 3, т. 1, Ташкент, 1958.
- 3 Միլիթարայ բժշկապետի Հերացույ Ջերմանց միլիթարոֆին, Վենետիկ, 1832:
- 4 Аллергия и аллергические болезни, под ред. Райка, ч. 2, 1966.
- 5 Գրիգորի, Քենոֆին բնութեան մարդոյ և նորին ցաւոյ, աշխատասիրութեամբ Ա. Կոռյանի, Երևան, 1962:
- 6 Анненков Н. Ботанический словарь, СПб, 1878.
- 7 Bedevian A. Illustrated polyglotte Dictionary of plant names, Calro, 1936.
- 8 Ալիշան Ղ., Հայրուսակ, Վենետիկ, 1895:
- 9 Մատուշյան Թ. Բույսերի անունների լատիներեն-հայերեն-ռուսերեն բառարան, Երևան 1962:
- 10 Ղանդիլյան Պ., Հովսեփյան Ա., Պետրոսյան Լ. Բուսաբանական բառարան, Երևան, 1975:
- 11 Флора Армении, под ред. А. Тахтаджяна, т. 1—6, Ереван, 1954—1973; Гроссгейм А. Флора Кавказа, т. т. 1—7, Баку—Л., 1939—1967; Флора СССР, под ред. В. Комарова, т. т. 1—30, Л.—М., 1934—1960; P. Davis, Flora of Turkey, v. v. 1—5, Edinburgh, 1965—1977; E. Boissier, Flora orientalis, v. v. 1—6, Geneve—Basel, 1867—1888.
- 12 Атлас лекарственных растений СССР, под ред. Н. В. Цицина, М., 1962; Атлас ареалов и ресурсов лекарственных растений СССР, под ред. П. С. Чикова, М., 1976.
- 13 Оголевцев Г. С. Энциклопедический словарь лекарственных эфирно-масличных и ядовитых растений, М., 1951.
- 14 Золотницкая С. Я. Лекарственные ресурсы флоры Армении, изд. АН АрмССР, т. 1—2, Ереван, 1958, 1965.
- 15 Ամիրզադար Ամասիացի, Անգլոսոց անպէտ, խմբագրութեամբ Կ. Բամաջյանի, Վիեննա, 1926:
- 16 Адо А. Д. Общая аллергология, М., 1978.
- 17 Ковалева Н. Г. Лечение растениями, изд. «Медицина», М., 1972.
- 18 Брусиловский Е. С. Бронхиальная астма, Красноярск. 1969.
- 19 Ибрагимов Ф. И., Ибрагимова В. Основные лекарственные средства китайской медицины, М., 1960.
- 20 Pedacil Dioscoridis Anazarbaet, vierles Buch, von den Krautern und Gewachsen, Frankfurt, 1610.
- 21 Куркумов А. Г., Ахмедходжаева Х. С., Сидякин В. Г., Сыров В. Н. Фитоэстрогены из растений Средней Азии, Растительные ресурсы, 1976, XII, № 4.
- 22 Оганесян Л. История медицины в Армении, т. I, Ереван, 1946.
- 23 Ибн Сина, Канон врачебной науки, т. 2, Ташкент, 1956.